


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկան (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2001թ. հունվար-ապրիլ		% -ներով ընդամենի նկատմամբ	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	%-ով 2000թ. հունվար-ապրիլի նկատմամբ	2001թ. հունվար-ապրիլ	2000թ. հունվար-ապրիլ
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	168989.5	110.0	100.0	100.0
այդ թվում՝				
մանրածախ ապրանքաշրջանառություն	115753.2	114.4	68.5	65.8
բնակչությանը մատուցված ծառայություններ	53236.3	102.3	31.5	34.2

**ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները
(տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)**



Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2001թ. հունվար-ապրիլին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (համադրելի գներով՝ 10.0%) և դրանում ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը 2.7 տոկոսային կետով ու համամասնորեն նվազել է բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2001թ. ապրիլին սպառողական շուկայի ծավալը 2001թ. մարտի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 2.1%-ով:

Մանրածախ առևտուր


2001թ. հունվար-ապրիլին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է մոտ 169.0 մլրդ. դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 14.4%-ով (իսկ 2001թ. ապրիլին 2001թ. մարտ ամսվա համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, աճել է 5.2%-ով):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2001թ. հունվար - ապրիլին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը %-ով՝ ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը	115753.2	100.0
այդ թվում՝		
խանութներ	57695.1	49.8
հանրային սննդի օբյեկտներ	1401.9	1.2
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	26644.3	23.1
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	6603.9	5.7
կրպակներ	23408.0	20.2

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2001թ. հունվար - ապրիլին

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)



2001թ. հունվար-ապրիլին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է կազմել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) և կրպակներում իրականացվող առևտուրը՝ 93.1% (107747.4 մլն. դրամ), իսկ 6.9%՝ (8005.8 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի օբյեկտներում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին:


Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Գործող սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներից) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2001թ. հունվար-ապրիլին ապրանքաշրջանառության ծավալը, փաստացի գներով, կազմել է 26644.3 մլն. դրամ:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառներ) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի 2001թ. հունվար - ապրիլին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում տոկոսով՝	
		պարենային ապրանքներ	ընդհանուրի նկատմամբ ոչ պարենային ապրանքներ
Արարատ	158.4	9.6	90.4
Արմավիր	276.2	57.6	42.4
Գեղարքունիք	373.9	17.4	82.6
Լոռի	604.9	37.6	62.4
Կոտայք	457.8	44.9	55.1
Շիրակ	524.7	4.0	96.0
Սյունիք	11.4	-	100.0
Տավուշ	692.4	64.9	35.1
ք. Երևան	23544.6	14.2	85.8
Ընդամենը ՀՀ	26644.3	17.6	82.4

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 2001թ. հունվար-ապրիլին կազմել է 82.4%, իսկ պարենային ապրանքներինը՝ 17.6%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)
(տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



Ինչպես երևում է գծապատկերից, 2001թ. հունվար-ապրիլին 2000թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է ք.Երևանի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 1.7 տոկոսային կետով:

2001թ. մայիսի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 23880.4 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 56 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-ապրիլին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 5.7% կամ 6603.9¹ մլն. դրամը:


¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2001թ. հունվար-ապրիլին հանրապետությունում ըստ արտադրական և սպասարկման ոլորտի առևտրային կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկի, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է մոտ 53.2 մլրդ.դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ համադրելի գներով աճել է 2.3%-ով (իսկ 2001թ. ապրիլին 2001թ. մարտ ամսվա համեմատ ծառայությունների ծավալը, համադրելի գներով, կազմել է 96.0%): Կենցաղային ծառայությունների ծավալը կազմել է 638.8 մլն.դրամ, որը 2000թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի համեմատ, համադրելի գներով, կազմել է 91.2%: 2001թ. հունվարի-ապրիլին 2000թ. հունվար-ապրիլի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 1.9% հավելաճ, որը հիմնականում պայմանավորվել է օդային տրանսպորտի(9.0%), կենցաղային (5.4%), մշակույթի(3.6%), իրավական և բանկային (4.0%), տուրիստական-էքսկուրսիոն (3.1%), կրթության (2.4%), կապի (2.1%), առողջարանների և հանգստյան տների (0.2%) ծառայությունների սակագների հավելաճով: Միաժամանակ, գրանցվել է բժշկական ծառայությունների սակագների նվազում 0.2%-ով:

Բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների, 2001թ. հունվար-ապրիլին

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)



2001թ. հունվար-ապրիլին բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն բնակկոմունալ ծառայությունները՝ 32.7%, այդ թվում՝ բնակչությանն էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների բաժինը կազմել է 23.9%, մարդատար տրանսպորտի ծառայությունները՝ 28.6%, այդ թվում՝ օդային տրանսպորտի բաժինը կազմել է 23.9%:

2001թ. հունվար-ապրիլին, ըստ 28 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալների, ծառայությունների ծավալը կազմել է 255.5 մլն. դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.5%-ը: